## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ
## ՀԱՅԿԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հայկաշեն համայնք, ՀՀ Արմավիրի մարզ, գ.
Հայկաշեն, haykashen.armavir@mta.gov.am,
Հեռ. 37477880300 , haykashen.armavir@mta.gov.am

N 76
*30 հուլիս 2020թ.*

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

Մեծարգո մարզպետ

Կից Ձեզ է ներկայացվում Արմավիրի մարզի Հայկաշեն համայնքի ավագանու 2020 թվականի հուլիսի 28-ի թիվ 5 արտահերթ նիստի որոշումները:

Անդիր 51 թերթ:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վարշամ Հովհաննիսյան**

Կատ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հայկաշեն համայնք, 1-ին փողոց, 14 ա, հեռ. 077853222

# ՈՐՈՇՈՒՄ

2020 թվականի հուլիսի « 28 » N 15

## ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկաշեն համայնքի ավագանու 2020 թվականի հուլիսի 28-ի N 5 արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

1. ԳԱՌՆԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
2. ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
3. ԱՆԴՐԻԱՍ ՍԵՐՈԲՅԱՆ
4. ԶԱՎԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2020 թվականի հուլիսի « 28 »

գ. Հայկաշեն

Հավելված

Արմավիրի մարզի Հայկաշեն համայնքի
ավագանու 28.07.2020թ. N 15 որոշման

# ՕՐԱԿԱՐԳ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկաշեն համայնքի ավագանու 2020 թվական հուլիսի 28-ի N 5 արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:

զեկուցող՝ Վ. Հովհաննիսյան

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկաշեն համայնքի ավագանու 2019թվականի դեկտեմբերի 17-ի N 38-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

զեկուցող՝ Վ. Հովհաննիսյան

3. Դրամական օգնություն տրամադրելու մասին:

զեկուցող՝ Վ. Հովհաննիսյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հայկաշեն համայնք, 1-ին փողոց, 14 ա, հեռ. 077653222

## ՈՐՈՇՈՒՄ

2020 թվականի հուլիսի « 28 » **N 16-Ն**

### ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի N 38-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածով «Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով, « Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33–րդ հոդվածի չորրորդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության 16.07.2020թ N 2/7.3/14800-20 գրությամբ ներկայացված պետական փորձագիտական եզրակացությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկաշեն համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 17-ի « 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 38-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Եկամտային մասում՝
   3) Պակասեցնել համայնքի բյուջեի եկամուտները ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից 2520.0 հազ. դրամ:
   4) Ավելացնել պետական բյուջեից համայնքի բյուջեին տրամադրվող այլ դոտացիաներ Համաձայն դրամաշնորհի հատկացման պայմանագրի 942.9 հազ. դրամ:
2. Ծախսային մասում՝
   6) Պակասեցնել 09.01.01 ծախսային ծրագրի 4267 հոդվածի 2520.0 հազ. դրամ ծախսը:
   7) Դրամաշնորհի հատկացման պայմանագրով նախատեսված եկամուտը՝ 942.9 հազ.դրամ, բաշխել 01.01.01 ծախսային ծրագրի 4111 հոդված:
   8) 09.01.01 ծախսային ծրագրի 4111 հոդվածից 2986.0 հազ. դրամ տեղափոխել 01.01.01 ծախսային ծրագրի 4111 հոդված՝ 1476.0 հազ դրամ, 4232 հոդված՝ 10.0 հազ. դրամ, 4237 հոդված՝ 200.0 հազ. դրամ, 4267,հոդված՝ 400.0 հազ. դրամ, 4269 հոդված՝ 400.0, 4239 հոդված՝ 500.0 հազ. դրամ:
   9) 09.01.01 ծախսային ծրագրի 4111 հոդվածից 2060.0 հազ. դրամ տեղափոխել 01.06.01 ծախսային ծրագրի 4212 հոդված՝ 960.0 հազ դրամ, 4239 հոդված՝ 500.0 հազ դրամ, 4251 հոդված՝ 200.0 դրամ, 4269 հոդված՝ 400.0 դրամ:
   10) 09.01.01 ծախսային ծրագրի 4111 հոդվածից 1500.0 հազ դրամ տեղափոխել 10.07.01 ծախսային ծրագրի 4729 հոդված:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդ օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ կողմ՝-4 դեմ՝0 ձեռնպահ՝0

1. ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
2. ԱՆԴՐԻԱՍ ՍԵՐՈԲՅԱՆ
3. ԶԱՎԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
4. ԳԱՌՆԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2020 թվականի հուլիսի « 28 »

գ. Հայկաշեն

# ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկաշեն համայնքի « 2019 թվականի դեկտեմբերի 17-ի ավագանու N 38-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ավագանու որոշման

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկաշեն համայնքի « 2019 թվականի դեկտեմբերի 17-ի ավագանու N38-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ավագանու N16-Ն որոշման ընդունումը պայմանավորված է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5 -րդ կետի պահանջներով և դրա անհրաժեշտությունը կայանում է նրանում, որ այն ուղղված է նպաստելու համայնքի զարգացմանը՝ միասնական մեթոդաբանության հիման վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐՇԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

# ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկաշեն համայնքի « 2019 թվականի դեկտեմբերի 17-ի ավագանու N 38-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ավագանու N 16-Ն որոշման ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտություն չկա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐՇԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0010, Վազգեն Սարգսյան 3/8 , հեռ. 594015
Էլ. Փոստ suren.galstyan@justice.am

№ 2Հ.3/14800-20
16 07 2020թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ, ՀԱՅԿԱՇԵՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ ՎԱՐՇԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ

**Հարգելի պարոն Հովհաննիսյան,**

Ի պատասխան Ձեր 2020 թվականի հունիսի 24-ի թիվ 63 գրության՝ կից ներկայացվում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկաշեն համայնքի ավագանու «Համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 17-ի N 38-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշման նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացությունը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

15-14-20

X

Suren Galstyan

ՍՈՒՐԵՆ ԳԱԼՍՏՅԱՆ

Կատարող՝ Անահիտ Գևորգյան
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Հեռ. (010) 594116

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկաշեն համայնքի ավագանու «Համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 17-ի N 38-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշման նախագծի վերաբերյալ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկաշեն համայնքի ավագանու «Համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 17-ի N 38-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշման նախագծի /այսուհետ՝ Նախագիծ/ վերաբերյալ հայտնում ենք հետևյալը.

1) վերնագրից անհրաժեշտ է հանել «և լրացումներ» բառերը, քանի որ Նախագծով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկաշեն համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 17-ի N 38-Ն որոշման մեջ /այսուհետ՝ Որոշում/ կատարվում են միայն փոփոխություններ.

2) 1-ին կետից առաջ «փոփոխություն» բառն անհրաժեշտ է փոխարինել «հետևյալ փոփոխությունները.» բառերով՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ Նախագծով Որոշման մեջ կատարվում են մի շարք փոփոխություններ.

3) ենթակետերի համարակալումն անհրաժեշտ է վերանայել, մասնավորապես՝ թվերից հետո միջակետերի փոխարեն անհրաժեշտ է դնել փակագծեր.

4) 1-ին և 2-րդ կետերի 1-ին ենթակետերում «Կրճատել» բառն անհրաժեշտ է փոխարինել «Պակասեցնել» բառով.

5) Նախագծի 3-րդ կետում «հաջորդ օրը» բառերն անհրաժեշտ է փոխարինել «հաջորդող օրվանից» բառերով՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի դրույթները:

2. Նախագծով նախատեսվող փոփոխություններն անհրաժեշտ է կատարել նաև Արմավիրի մարզի Հայկաշեն համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 17-ի N 38-Ն որոշման համապատասխան հավելվածներում:

**Իրավական ակտերի փորձաքննության**

**գործակալության պետ՝**

7/15/2020

X

Emil Margaryan

Signed by: MARGARYAN EMIL 4014910245

ԷՄԻԼ

ՄԱՐԳԱՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հայկաշեն համայնք, 1-ին փողոց, 14 ա. հեռ. 077863222

## ՈՐՈՇՈՒՄ

2020 թվականի հուլիսի « 28 » N 17

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի սոցիալական հանձնաժողովի դրական եզրակացությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Արմավիրի մարզի Հայկաշենի գյուղական համայնքի 2020 թվականի բյուջեից 1000.0 հազ. դրամ տրամադրել համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ կողմ-4 դեմ-0 ձեռնպահ-0

1. ԱՆԴՐԻԱՍ ՍԵՐՈԲՅԱՆ
2. ԱՐՍԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
3. ԳԱՌՆԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
4. ԶԱՎԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐՇԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2020 թ. հուլիսի « 28 »

գ. Հայկաշեն

Հավելված

Արմավիրի մարզի Հայկաշեն համայնքի
ավագանու 28.07.2020 թ. N 17 որոշման

# ՑԱՆԿ

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԱՆՁԱՆՑ

| N | Ազգանուն , անուն | հազ.դրամ |
|---|---|---|
| 1 | Ղազարյան Նաիրի | 70.0 |
| 2 | Արշակյան Կարեն | 70.0 |
| 3 | Բաղդասարյան Աստուր | 50.0 |
| 4 | Սահմադյան Ջեմմա | 30.0 |
| 5 | Ամարյան Հերիքնազ | 30.0 |
| 6 | Խուդոյան Սինամ | 40.0 |
| 7 | Կիրակոսյան Տիգրան | 50.0 |
| 8 | Հովհաննիսյան Գնել | 50.0 |
| 9 | Մարտիրոսյան Գարսևան | 70.0 |
| 10 | Հովհաննիսյան Հայկազ | 70.0 |
| 11 | Հարությունյան Ռուզան | 30.0 |
| 12 | Բաղդասարյան Գոհար | 70.0 |
| 13 | Թովմասյան Նորիկ | 50.0 |
| 14 | Այլազյան Ալիխան | 70.0 |
| 15 | Գասպարյան Գուրգեն | 50.0 |
| 16 | Տոնոյան Արման | 50.0 |
| 17 | Մկոյան Արմեն | 50.0 |
| 18 | Ավետիսյան Արարատ | 50.0 |
| 19 | Հովհաննիսյան Նշան | 50.0 |
| | Ընդամենը | 1000.0 |